# ՎԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ COVID-19 ԿԱՍԿԱԾՈՎ ՀԻՎԱՆԴՆԵՐԻՑ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՆՄՈՒՇԱՌՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Լաբորատոր հետազոտությունների համար հավաքված **բոլոր** նմուշները համարվում են հավանական **ախտածին:**

Նմուշառում իրականացնող **բոլոր** բուժ-աշխատողները պետք է խստորեն հետևեն վարակների կանխարգելման ցուցումներին

**Անհատական պաշտպանիչ միջոցների պատշաճ կիրառում՝**

- աչքերի պաշտպանություն (ակնոց կամ պաշտպանիչ դիմակ)
- բժշկական դիմակ (աէրոզոլ առաջացնող միջոցառումների ժամանակ հատուկ ռեսպիրատորների օգտագործում *(օրինակ N95, FFP2 կամ համարժեք)*՝ կրելուց առաջ ստուգելով պիտանելիության ժամկետը)
- մաքուր, երկար թևավոր հանդերձանք և ձեռնոցներ:

Նմուշառման բոլոր գործընթացները կատարել օդափոխվող սենյակներում՝ ապահովելով նվազագույն բնական օդափոխություն **160լ/վ**:

Նմուշառման ժամանակ սենյակում գտնվող անձանց քանակը սահմանափակել և հասցնել նվազագույնի:

Հետևել անհատական պաշտպանիչ միջոցները հագնելու և հանելու կանոններին:




Հետևել, որ աշխատանքային մակերեսները ախտահանվեն քլորային հիմքով ախտահանիչ նյութերով:

Նախքան նմուշների տեղափոխումը անհրաժեշտ է՝

- տեղեկացնել լաբորատորիային իրավիճակի և հրատապության մասին
- ապահովել, որ նմուշներ տեղափոխող անձնակազմը վերապատրաստված լինի նմուշի անվտանգ տեղափոխման և հնարավոր թափվելու դեպքում ախտահանումը իրականացնելու համար:

**Թեժ գծի հեռախոսահամարներ՝**
**8003 և 060 83 83 00**

Առողջապահության Նախարարություն
Ministry of Health of the Republic of Armenia